

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄԸ
ՈՐՈՇԵՍ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՖԻՑԻՏԻ ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ ԵՐԱՇԽԻՔ
/Հայեցակարգային մոտեցումներ/**

Գ. Հարությունյան – ՀՀ ՄԴ նախագահ

/Զեկույց Երևանյան միջազգային խորհրդա-
ժողովում, 21 հոկտեմբերի 2016թ./

Միջազգային խորհրդաժողովի հարգարժան մասնակիցներ,
Հարգելի ներկաներ,

Ինչպես գիտեք, Եվրախորհրդի Վենետիկի հանձնաժողովն այս տարվա մարտին իր 106-րդ լիազումար նիստում լսեց իմ հաղորդումը սահմանադրական մշտադի-տարկման հայեցակարգի վերաբերյալ: Հունիսին, 107-րդ լիազումար նիստի շրջա-նակներում, Վենետիկի հանձնաժողովի Գիտական խորհուրդը քննության առավ տվյալ հիմնախնդիրը՝ սույն խորհրդաժողովի քննարկյալ առարկա դարձնելու վերա-բերյալ մեր հայեցակարգային մոտեցումների առումով, կարելուրեց քննարկումներին հանձնաժողովի փորձագետների մասնակցությունը, եւ այդ մասին հաղորդում ներ-կայացվեց լիազումար նիստին:

Ինչպես տեսնում եք, առաջ քաշված հիմնախնդիրն առավել քան հրատապ լի-նելով համաեվրոպական հնչեղություն է ստացել:

Ես կփորձեմ հակիրճ Ձեզ ներկայացնել հիմնախնդրի էությունը եւ կատարել հայեցակարգային բնույթի մի շարք եզրահանգումներ: Տեղեկացնեմ նաեւ, որ ման-րամասներին կարող եք ծանոթանալ Ձեզ բաժանված եռալեզու մենագրության մի-ջոցով, որը հենց վերնագրված է «Սահմանադրական մշտադիտարկում»:

Որո՞նք են այն ելակետային թեզերը, որոնց վրա կառուցվում են մեր հայե-ցակարգային մոտեցումները.

1. նոր հազարամյակում մարդկությանը պատուհասած շատ չարիքներ` ահաբեկչություն, հազարավոր մարդկանց բռնի տեղահանումներ, անկառավարելի միգրացիա, կոռուպցիա, սոցիալական ծայրահեղ շերտավորում, սոցիալական ու տնտեսական անկայունություն, քաղաքական-տնտեսական-վարչական ներուժի սերտաճում, մարդու իրավունքների բազմաբնույթ ոտնահարումներ, իրավունքի գերակայության սկզբունքի ոչ լիարժեք իրացում եւ այլն, մեծապես պայմանավորված են սահմանադրականության դեֆիցիտով, Սահմանադրության արժեքանության, հիմնարար սկզբունքների ու նորմերի եւ իրական կյանքի միջեւ առաջացած խզումով,

2. նոր հազարամյակում առավել ակնհայտ է դառնում, որ բավարար կենսունակ չէ մարդկային հանրության իմունային բավարարությունը եւ երաշխավորված չեն խախտված սահմանադրական հավասարակշռության ժամանակին բացահայտումը, գնահատումը եւ վերականգնումը,

3. սոցիալական հանրության կայուն եւ դինամիկ զարգացումը երաշխավորող գործառույթային ու կառուցակարգային լուծումները ոչ միայն իրական կյանքում, այլեւ սահմանադրական մակարդակում ներդաշնակ չեն նոր մարտահրավերներին: Դրա մասին են վկայում ոչ միայն իրավունքի գերակայության ինդեքսի գնահատման արդյունքները հարյուրից ավելի երկրներում, այլեւ Եվրոպական միության կազմավորման մակընթացություններն ու տեղատվությունը,

4. գիտական մոտեցումները հիմնախնդրի լուծման առնչությամբ հակասական են ու միասնական դոկտրինայի մշակումը հեռու է բավարար լինելուց: Բեկումնային կարելի է համարել Վենետիկի հանձնաժողովի 106-րդ լիազուար նիստի կողմից Իրավունքի գերակայության հսկիչ ցանկի վերաբերյալ զեկույցի ընդունումը, որը, սակայն, կյանքի կոչվելու լուրջ ճանապարհ պետք է անցնի,

5. խիստ խայտաբղետ են պատկերացումները «սահմանադրականություն», «սահմանադրական մշակույթ», «սահմանադրական ախտորոշում», «սահմանադրական մշտադիտարկում» եւ ելակետային նշանակության շատ հասկացությունների, դրանց փոխադարձ կապի ու փոխպայմանավորվածության վերաբերյալ, ինչի արդ-

յունքում դեռևս չեն գտնվել երկրում սահմանադրական հավասարակշռության յուրաքանչյուր խախտումը բացահայտելու, գնահատելու և հաղթահարելու գործուն և համընդունելի լուծումներ,

6. իրավական հիմնախնդիրների համակարգային լուծումները հաճախ տեղիք են տալիս քաղաքական նպատակահարմարությամբ թելադրված միջամտությունների, ինչը հանգեցնում է հասարակական օրգանիզմին պատուհասած հիվանդությունների հետագա խորացման, երբ անխուսափելի են դառնում վիրահատական միջամտությունները,

7. անցումն անձնիշխանությունից ժողովրդավարության միայն սահմանադրական կամ օրենսդրական նոր լուծումներով պայմանավորված չեն: Նախ այդ լուծումներն ինքնին համակարգային նոր որակ ու ամբողջականություն պետք է ունենան: Սակայն գլխավոր խնդիրն այն է, թե դրանք իրական կյանքում ինչպիսի փոփոխությունների են հանգեցնում: Տրանսֆորմացիան կշարունակվի այնքան ժամանակ, քանի դեռ իրավունքի գերակայության ինդեքսը կրիտիկականից բարձր մակարդակ չի հավաքել: Վերափոխումների արդյունավետության գնահատման հիմնական չափանիշը կարող է բնութագրվել բացառապես իրավունքի գերակայության ինդեքսի համարժեք աճով,

8. Սահմանադրության ինքնաբավության ու սահմանադրականության երաշխավորման տեսանկյունից նոր ժողովրդավարության երկրներում հիմնականում դեռևս համարժեք լուծումներ չեն գտնվել անմիջական ժողովրդավարության ներուժի իրացման ու քաղաքացիական հասարակության սահմանադրական դերակատարության երաշխավորման, սահմանադրական պատասխանատվության գործուն ինստիտուտների արմատավորման, իշխանության թեւերի դինամիկ հավասարակշռության ապահովման, իրավունքի գերակայությունը հանրային վարքագծի հիմնաքար դարձնելու, համարժեք համակեցության մշակույթ արմատավորելու և մի շարք այլ հարցերում:

«Ի՞նչ անել» հարցին պատասխանելու համար մենք ելակետային ենք համարում հիմնական հասկացությունների վերաբերյալ հետեյալ մոտեցումները:

Ա/ **«Սահմանադրություն»** հասկացության բազմաթիվ բնորոշումներով հանդերձ, մենք առաջնային ենք համարում, որ Սահմանադրությունը հասարակական համաձայնություն է կենսագոյի հիմնարար սկզբունքների, արժեքների ու կանոնների շուրջ: **Այն առաջին հերթին քաղաքացիական հասարակության հիմնական օրենքն է** եւ պետք է ունենա պաշտպանության ու կյանքի կոչման համարժեք ու գործուն կառուցակարգեր: Սահմանադրությունը՝ որպես քաղաքակիրթ համակեցության հիմնական օրենք, երաշխիքն ու միջոցն է կայուն եւ դինամիկ զարգացում ապահովելու համար: Իսկ դա հնարավոր է դառնում միայն այն դեպքում, երբ Սահմանադրության ուժով իրավունքի գերակայությունը դառնում է անձի սոցիալական վարքագծի, պետության քաղաքական ինստիտուտների քաղաքական վարքագծի, իշխանությունների հանրային վարքագծի հենքը:

Բ/ Իրավական պետությունում **«սահմանադրական մշակույթ»** հասկացությունը մեր կողմից բանաձեւվում է որպես պատմականորեն ձեւավորված, կայուն, սերունդների ու ողջ մարդկության փորձառությամբ հարստացած համոզմունքների, պատկերացումների, իրավընկալման, իրավագիտակցության՝ հանրային ճանաչողության առանցքը կազմող արժեքային որոշակի համակարգ, որը հիմք է հանդիսանում սոցիալական հանրության համար հասարակական համաձայնությամբ սահմանել եւ երաշխավորել իր ժողովրդավարական ու իրավական վարքագծի հիմնարար կանոնները:

Երբեք միջազգային հանրության կողմից ձեռնարկված կայուն զարգացման նոր օրակարգը կյանքի չի կոչվի, եթե միջազգային ու ներպետական հարաբերություններում չապահովվի սահմանադրական մշակույթի անհրաժեշտ ու բավարար մակարդակ՝ խարսխված սոցիալական կյանքի սահմանադրականացման, արդարության եւ մարդու իրավունքների գերակայության սկզբունքների վրա: ՄԱԿ-ի Գլխավոր

ասամբլեայի կողմից 2015 թվականի սեպտեմբերին միաձայնությամբ ընդունված ու մինչև 2030 թվականն ընդգրկող կայուն զարգացման 17 նպատակների ու 169 խնդիրների իրացումը միտված է հենց այնպիսի աշխարհի ստեղծմանը, որում նման զարգացման կարեւորագույն նախադրյալները կդառնան, մասնավորապես, **ժողովրդավարությունը, իրավունքի գերակայությունը, խելամիտ կառավարումը**: Աշխարհի պետությունների պարտավորվածությունն է համարվում «Ազգային ու միջազգային մակարդակներում իրավունքի գերակայության զարգացմանը նպաստելը եւ բոլորի համար արդարադատության հավասար մատչելիության ապահովումը»: Իսկ դա պահանջում է սահմանադրական մշակույթի համարժեք մակարդակ:

Գ/ **«Սահմանադրականություն»** հասկացությունը մեր կողմից առաջին հերթին բնորոշվում է որպես **իրական կյանքում սահմանադրորեն ապրելու կարողունակություն**: «Սահմանադրականությունը» հասարակական համաձայնությամբ սահմանված ժողովրդավարական ու իրավական վարքագծի հիմնարար կանոնների առկայությունը, դրանց՝ որպես ապրող իրողության, գոյությունն է հանրային կյանքում, յուրաքանչյուր անհատի քաղաքացիական վարքագծում, պետաիշխանական լիազորությունների իրականացման գործընթացում: Առավել ընդհանուր՝ **«Սահմանադրականությունը» սահմանադրական արժեքների համակարգային ու իմաստավորված առկայությունն է հանրային կյանքում**: Այն հանդես է գալիս որպես հասարակության սոցիալական վարքագծի բնութագրման **ընդհանուր իրավական սկզբունք**: Ուստի խնդիրը հանգում է ոչ թե Սահմանադրության պարզապես կիրառմանը, այլ այնպիսի սոցիալական համակարգի ձեւավորմանը, որում Սահմանադրությունն իրացվում է այդ համակարգի յուրաքանչյուր բջջի կողմից՝ որպես դրա գոյության կենսապայման:

Մեր կարծիքով, սահմանադրականության գոյությունն ամենից առաջ արժեքանական բնույթ ունի եւ կապված է սահմանադրական մշակույթի իրողության հետ: Սահմանադրականությունը ոչ այնքան գրավոր Սահմանադրության վկայությունն է, որքան սահմանադրական մշակույթի դրսևորման բնութագրիչը, սահմանադրական

կարգի, դրա էական բաղադրատարրերի իմաստավորված գոյությունն իրական կյանքում: **Սահմանադրականությունը, ինչպես եւ իրավունքը, օբյեկտիվ սոցիալական իրողություն են, սոցիալական հանրության քաղաքակիրթ համակեցության աստիճանի վկայությունը՝ տվյալ հանրության կայուն եւ դինամիկ զարգացման երաշխիքը**¹: Սահմանադրականությունը սոցիալական հանրության փոխհամաձայնեցված գոյություն է, ժամանակի մեջ նրա իմաստավորված գոյության վկայությունը, հասարակական հարաբերությունների ու դրանց իրավական կանոնակարգման հաստիճանի բնութագրիչը: Սահմանադրականությունը քաղաքակիրթ համակեցության գերնպատակն է, որին հասարակությունը պետք է անընդհատ ձգտի:

Դ/ **«Սահմանադրական ախտորոշում»** հասկացությունը ներառում է հասարակության մեջ սահմանադրականության գնահատման գործիքակազմն ու ողջ գործընթացը, **սահմանադրորեն ամրագրված արժեքներին, սկզբունքներին ու նորմերին իրական հասարակական հարաբերությունների համապատասխանության բացահայտումը**: Սահմանադրական ախտորոշումն անհրաժեշտ է առաջին հերթին հանրային կյանքում սահմանադրականության **իրական վիճակի, զարգացման միտումների ու տարաբնույթ ձեւախեղումների բացահայտման համար**:

Սահմանադրական ախտորոշման օբյեկտ են հանդիսանում հասարակական կյանքն ամբողջությամբ, սահմանադրորեն սահմանված ֆունկցիոնալ հավասարակշռության վիճակը եւ, մասնավորապես, իշխանության մարմինների գործունեությունը²:

¹ Այս մասին տե՛ս. Գ. Արությունյան, Конституционализм как фундаментальный принцип права в правовом государстве // Конституционное правосудие, 2012, N 1. - С. 5-16. Н. Бондарь, Концепция судебного конституционализма: методология исследования в свете практики конституционного правосудия. Նույն տեղում, էջ 29:

² Սահմանադրական ախտորոշման օբյեկտի վերաբերյալ մեր մոտեցումները մասնագիտական գրականության մեջ լայն արձագանք են գտել: Մասնավորապես, պրոֆեսոր Ն.Ս. Բոնդարը գրում է՝ «ինչպես արդարացիորեն իր ելույթներից մեկում նշել է պրոֆեսոր Գ.Գ. Հարությունյանը, երկրում սոցիալ-տնտեսական եւ քաղաքական գործընթացների սահմանադրական ախտորոշումը պետք է սկսել հենց սահմանադրականության համակարգից» /տե՛ս Բոնдарь Н.С. Конституционная модернизация российской государственности: в свете практики конституционного правосудия. М., 2014. –С. 14/:

Սահմանադրական ախտորոշման սուբյեկտներ են հանդիսանում. Ժողովուրդը՝ որպես իշխանության կրող եւ աղբյուր, պետական կառավարման եւ տեղական ինքնակառավարման մարմինները, քաղաքացիական հասարակության բոլոր ինստիտուտները, յուրաքանչյուր անձ:

Հատկապես հասարակական վերափոխումների ժամանակաշրջանում կամ սահմանադրական անկայուն հավասարակշռության պայմաններում **սահմանադրական ախտորոշման հիմնական խնդիրներն են, մասնավորապես.**

- խախտված սահմանադրական հավասարակշռության բացահայտումը,
- տվյալ խախտման բնույթի եւ դրսևորման ձևերի գնահատումը՝ իրավիճակի բազմագործոն գնահատման հիման վրա,
- այդ խախտումների պատճառի բացահայտումը եւ գործիքակազմի առաջադրումը՝ խախտված սահմանադրական հավասարակշռությունը վերականգնելու համար:

Սահմանադրական ախտորոշումը պետք է հենվի հետևյալ հիմնական սկզբունքների վրա.

- սահմանադրական հավասարակշռության ցանկացած խախտման բացահայտում անընդհատ գործողության ռեժիմում,
- խախտման բնույթի գնահատում,
- սահմանադրականության վերականգնման միջոցների եւ եղանակների առաջադրում,
- ֆունկցիոնալ հավասարակշռությունը վերականգնելիս նոր խախտում չթույլատրելու երաշխավորվածություն:

Հետեւողական սահմանադրական ախտորոշում իրականացնելու համար անհրաժեշտ է առանձնացնել **ինդիկատորների այնպիսի համակարգ,** ինչն ի վիճակի կլինի համակողմանիորեն եւ ամբողջական բնութագրել ուսումնասիրվող հասարակական հարաբերությունների սահմանադրականությունը:

Ե/ «Սահմանադրական մշտադիտարկումը» միջոց ու հնարավորություն է սահմանադրական ախտորոշման հիման վրա դինամիկայում սահմանադրական հավասարակշռությունը երաշխավորելու, սահմանադրականության դեֆիցիտը հաղթահարելու, կայուն եւ դինամիկ զարգացում ապահովելու համար: Սահմանադրական մշտադիտարկումը ենթադրում է.

- շարունակական սահմանադրական ախտորոշում՝ սահմանադրականության հնարավոր ձեւախեղումների բացահայտման նպատակով,
- դրա արդյունքների համադրված վերլուծության ու գնահատման արդյունքում խախտված սահմանադրական հավասարակշռության վերականգնման գործառնությամբ ու կառուցակարգային համակարգերի առկայություն,
- հետադարձ կապի ապահովում՝ սահմանադրական լուծումների ու սահմանադրական պրակտիկայի զարգացումների միջեւ,
- սահմանադրական պատասխանատվության գործուն համակարգի առկայություն:

Հարգելի ներկաներ,

Նկատի ունենալով, որ մեր նախաձեռնությամբ Երեւանի պետական համալսարանում ստեղծված վերլուծական կենտրոնի մասնագետները համեմատական վերլուծության արդյունքում Ձեր քննարկմանը կներկայացնեն սահմանադրական ախտորոշման գործիքակազմի եւ իրականացման մեթոդների վերաբերյալ ծավալուն գեկույց, եւ գերադասում եմ Ձեր ուշադրությունը հրավիրել հետեւյալ երկու հրատապ հարցերի վրա:

Առաջին՝ ի՞նչ դեր ու նշանակություն կարող է ունենալ Վենետիկի հանձնաժողովի կողմից հաստատված՝ Իրավունքի գերակայության հսկիչ ցանկը³ սահմանադրական մշտադիտարկում իրականացնելիս:

³ Տե՛ս. «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողով, գեկույց CDL-AD(2016)007, Ստրասբուրգ, 18 մարտի 2016թ.:

Երկրորդ` ինչպիսին կարող է լինել սահմանադրական մշտադիտարկման իրավական համակարգը` գործառույթային ու կառուցակարգային լուծումների առումով:

Մեր կարծիքով, առաջին հարցի պատասխանը պետք է փնտրել թե՛ մեթոդաբանական եւ թե՛ մեթոդական հարթությունում:

Մեթոդաբանական առումով Հսկիչ ցանկը` հենվելով իրավունքի գերակայության` **որպես համընդհանուր ու ժողովրդավարության հիմնարար սկզբունքի** ընկալման, միջազգային իրավական փաստաթղթերում դրա բնութագրման, էության բացահայտման, իրացման առանձնահատկությունների համակողմանի գնահատման, տարբեր հեղինակների կողմից դրա բնորոշման համեմատական վերլուծության վրա, առաջին անգամ համակարգային ամբողջականության մեջ ներկայացնում է իրավունքի գերակայության սկզբունքի բազմաշերտ դրսեւորումներն իրավական պետությունում: Արվում են այնպիսի ելակետային նշանակության հետեւություններ, համաձայն որոնց, մասնավորապես`

- իրավունքի գերակայության սկզբունքը պետք է կիրառվի պետական իշխանության բոլոր մակարդակներում /կետ 17/,

- անկախ հասկացության տարակերպ մեկնաբանություններից, առկա է իրավունքի գերակայության տարրերի միասնական ընկալում: Դրանք վեցն են.

- **օրինականությունը,**
- **իրավական որոշակիությունը,**
- **կամայականության արգելքը,**
- **անկախ եւ անաչառ դատարանների կողմից արդարադատության իրականացման մատչելիությունը,**
- **մարդու իրավունքների հարգումը,**
- **անխտրականությունը եւ օրենքի առջեւ բոլորի հավասարությունը /կետ 18/,**

- կարելուովում է ՄԱԿ-ի կողմից 2012թ. ընդունված հռչակագրային մոտեցումն առ այն, որ «իրավունքի գերակայությունը հավասարապես կիրառելի է բոլոր երկրների ու միջազգային կազմակերպությունների համար» /կետ 22/,

- Իրավունքի գերակայության հսկիչ ցանկը նպատակաուղղված է հիմնականում իրավական երաշխիքների գնահատմանը /կետ 25/,

- իրավունքի լիակատար գերակայության հասնելը դեռևս չիրականացված խնդիր է նույնիսկ կայուն ժողովրդավարություն ունեցող երկրների համար /կետ 29/,

- առանց մարդու իրավունքների երաշխավորման, ապահովման ու պաշտպանության չի կարող լինել իրավունքի գերակայություն /կետ 31/,

- իրավունքի գերակայությունը վերաբերելի է ամբողջ իրավական համակարգին, իրավունքով իշխանության սահմանափակման ու մարդու իրավունքների պաշտպանության բոլոր դրսևորումներին /կետեր 33-37/,

- իրավունքի գերակայությունը կարող է հաջողությամբ իրացվել միայն այն երկրում, որի բնակչությունը կոլեկտիվ պատասխանատվություն է զգում այդ սկզբունքը կյանքի կոչելու համար եւ ցանկանում է այն դարձնել իր սեփական իրավական, քաղաքական եւ հանրային մշակույթի անբաժան մասը /կետ 43/:

Նշված բոլոր եզրահանգումները հիմնաքարային նշանակություն ունեն նաեւ մեր կողմից առաջադրված հայեցակարգային մոտեցումների իրացման տեսանկյունից:

Մեթոդական առումով ելակետային է Վենետիկի հանձնաժողովի կողմից արձանագրված այն դրույթը, համաձայն որի` Իրավունքի գերակայության հսկիչ ցանկը նորարարական ու արդյունավետ միջոց է այս կամ այն երկրում իրավունքի գերակայության երաշխավորումը **միասնական մեթոդիկայով** գնահատելու համար` հաշվի

առնելով տվյալ երկրի իրավական համակարգի կոնկրետ առանձնահատկությունները /կետեր 20, 25, 34/: Միաժամանակ, իրավունքի գերակայության գնահատման գործնական քայլեր իրականացնելու համար ուղեցուցային նշանակություն ունեն Հսկիչ ցանկի 43-120-րդ կետերում ներկայացված մեթոդական նշանակության մոտեցումները:

Հետևությունը, կարծում ենք, միանշանակ է՝ Վենետիկի հանձնաժողովի կողմից մշակված Իրավունքի գերակայության հսկիչ ցանկը որակապես նոր էջ է բացում գործնականում իրավունքի գերակայության սկզբունքի իրացման մասին ամբողջական, համակարգված, հստակ պատկերացում կազմելու, բազմագործոն վերլուծություն կատարելու, իրավական զարգացումների գործընթացն արդյունավետ ու օպտիմալ կառավարելու համար: Այն տալիս է համակարգված, ամբողջական գործիքակազմ իրավունքի գերակայության վիճակի թե՛ քանակական եւ թե՛ որակական գնահատում իրականացնելու համար:

Ավելին, մեր խորին համոզմամբ, իրավունքի գերակայության վիճակի նման բազմաշերտ բացահայտումը լիարժեք պատկերացում կտա նաեւ երկրում սահմանադրականության իրական վիճակի եւ սահմանադրական մշակույթի մակարդակի մասին: Հետեւաբար, սահմանադրական մշտադիտարկում իրականացնելու համար Իրավունքի գերակայության հսկիչ ցանկը ձեռք է բերում բացառիկ ելակետային նշանակություն՝ թե՛ մեթոդաբանական մոտեցումների եւ թե՛ մեթոդական կողմնորոշումների առումով:

Խնդիրն այն է, որ սահմանադրական մշտադիտարկումը ոչ թե հատվածական ու դիսկրետ բնույթ պետք է կրի, այլ իրականացվի անընդհատության եւ հստակ պարբերականության սկզբունքներով՝ նաեւ իրավունքի գերակայության վիճակի գնահատման միջոցով բացահայտելով սահմանադրական հավասարակշռության յուրաքանչյուր խախտում, սահմանադրական արժեքանությունից ու սկզբունքներից յուրաքանչյուր շեղում, սահմանադրականության ամեն մի ձեւախեղում:

Այժմ կցանկանայի ընդհանուր գծերով անդրադառնալ, թե մեր կարծիքով ինչպիսին պետք է լինի սահմանադրական մշտադիտարկման իրավական համակարգը՝ գործառութային ու կառուցակարգային լուծումների առումով:

Վենետիկի հանձնաժողովի կողմից հաստատված հիշյալ ցանկում նշվում է, թե եվրոպական երկրների համար ինչպիսի տեղեկատվական աղբյուրներ կարող են հիմք ծառայել իրավունքի գերակայության գնահատման համար: Եթե կատարվում է առանձին, մեկանգամյա հետազոտություն՝ թեկուզ տարեկան կտրվածքով, ապա դա մի մոտեցում է պահանջում, իսկ եթե մշտադիտարկումն անընդհատ է ու շարունակական, ապա մոտեցումը բոլորովին այլ պետք է լինի:

Սահմանադրական մշտադիտարկման էությունն այն է, որ պետք է իրականացվի հանրային կյանքում սահմանադրականության իրական վիճակի **անընդհատ ու համակարգված բացահայտում: Իրականացվի այնպիսի գործառույթ, ինչպիսին բնորոշ է յուրաքանչյուր օրգանիզմի իմունային համակարգին:** Հասարակական ամբողջ օրգանիզմը պետք է ներառված լինի սահմանադրական ֆունկցիոնալ հավասարակշռության դինամիկ պահպանման, դրա ամեն մի խախտում բացահայտելու, գնահատելու ու համարժեք իրավաչափ միջամտությամբ վերականգնելու գործընթացում: Իրավունքի գերակայության հսկիչ ցանկը բացառիկ միջոց ու հնարավորություն է հենց նման գործառույթից բխող անհրաժեշտ **սահմանադրական ախտորոշում իրականացնելու համար**, ինչը սահմանադրական մշտադիտարկման անհրաժեշտ ու ելակետային փուլն է:

Ինչպե՞ս պետք է կազմակերպվի ու իրականացվի սահմանադրական մշտադիտարկումը:

Մենք կարծում ենք, որ գործառութային առումով սահմանադրական մշտադիտարկման մեջ էական դերակատարություն պետք է ունենան երկրի սահմանադրական բոլոր ինստիտուտներն ու քաղաքացիական հասարակությունը:

Ներկայումս մասնակիորեն այս խնդիրը լուծվում է սահմանադրական վերահսկողության միջոցով: Սակայն, մեր ուսումնասիրությունները հանգեցնում են այն

հետեւութեանը, որ սահմանադրական վերահսկողութեան համակարգում հիմնականում գործունակ է դատական սահմանադրական վերահսկողութեան բաղադրիչը: Մյուս բոլոր տարրերը հանդես չեն գալիս համակարգային ամբողջականութեան տրամաբանությամբ եւ իրենց ֆունկցիոնալ դերակատարութեան ու համակարգային ամբողջականութեան մեջ չեն համապատասխանում սահմանադրականութեան ձեւախեղումների ու բացասական սոցիալական էներգիայի կուտակումների հաղթահարման նոր մարտահրավերների պահանջներին: Ուստի պահանջվում են որակապես նոր մոտեցումներ ու լուծումներ:

Մեր կողմից առաջարկվող դոկտրինայում առաջին հերթին շեշտադրումը կատարվում է երկու հիմնախնդրի լուծման վրա.

առաջին` երաշխավորել ու ապահովել Սահմանադրութեան ինքնաբավութիւնը եւ դինամիկ, էվոլյուցիոն զարգացումը, հաղթահարել խզումը Սահմանադրութեան եւ իրական կյանքի միջեւ,

երկրորդ` ստեղծել գործառութային ու կառուցակարգային անհրաժեշտ երաշխիքներ սահմանադրականութեան ձեւախեղումները ժամանակին բացահայտելու, գնահատելու եւ հաղթահարելու համար:

Մրանցից յուրաքանչյուրը կարող է դառնալ ինքնուրույն քննարկական լուրջ թեմա: Առաջինին մենք հիմնական գծերով անդրադարձել ենք Հայաստանի Հանրապետութեան Սահմանադրութեան վերջին բարեփոխումների հայեցակարգում եւ գտնում ենք, որ այնտեղ ներկայացված մոտեցումները մեծ հետաքրքրություն կարող են ներկայացնել յուրաքանչյուր երկրի համար:

Այս զեկույցի շրջանակներում կփորձեմ համառոտ անդրադարձ կատարել երկրորդ խնդրին:

Մեր ելակետային մոտեցումն այն է, որ սահմանադրական մշտադիտարկման կառուցակարգային համակարգում համարժեք դերակատարություն պետք է ունենան սահմանադրական բոլոր սուբյեկտները` մարդը, քաղաքացիական հասարակութեան ինստիտուտները, հանրային իշխանութեան բոլոր մարմինները: Նրանք պետք է հան-

դես գան համակարգային ամբողջականության մեջ, փոխլրացնող գործառույթներով՝ բացառելով սահմանադրական հավասարակշռության որեւէ խախտում անարձագանք թողնելու հանգամանքը: Վերջինի առումով բացառիկ է հասարակության յուրաքանչյուր անդամի եւ քաղաքացիական հասարակության ինստիտուտների դերակատարությունը, ինչի իրացումը սահմանադրական անհրաժեշտ երաշխիքներ պետք է ունենա: Հանձին դրա՝ պետք է ապահովված ու երաշխավորված լինի սոցիալական հանրության նյարդային համակարգի անխափան գործունեությունը:

Հանրային իշխանության համակարգում առանձնապես կարեւորվում է պետության գլխի դերակատարությունը: Միջազգային սահմանադրական պրակտիկայում, որպես կանոն, Նախագահը հանդիսանում է Սահմանադրության գերակայության ապահովման քաղաքական երաշխավորը: Դրա համար անհրաժեշտ է, մասնավորապես, գործուն սահմանադրաիրավական բովանդակություն հաղորդել այնպիսի սահմանադրական դրույթների, ինչպիսիք են. «Նախագահը հետեւում է Սահմանադրության պահպանմանը» (տե՛ս Ֆրանսիա (հոդվ. 5), Լեհաստան (հոդվ. 126, կետ 2), Հայաստան (հոդվ. 123), «Նախագահը հանդիսանում է Սահմանադրության երաշխավորը» (տե՛ս Ռուսաստանի Դաշնություն, հոդվ. 80, մաս 2), «Նախագահն ապահովում է ...ժողովրդավարական ինստիտուտների նորմալ գործողությունը...» (Պորտուգալիա, հոդվ. 120), «...Նախագահն ապահովում է պետական մարմինների նորմալ գործունեությունը» (Սլովակիա, հոդվ. 101, մաս 1) եւ այլն:

Սահմանադրության պահպանմանը հետեւելը զուտ ձեւական բնույթ է կրում բոլոր այն դեպքերում, երբ Նախագահի ինստիտուտի կողմից շարունակական սահմանադրական ախտորոշում չի իրականացվում:

Նկատի ունենալով ժամանակի սահմանափակված լինելու հանգամանքը, ցանկանում եմ ամփոփ նշել նաեւ, որ սահմանադրական մշտադիտարկման համակարգի արմատավորումը պահանջում է նորովի գնահատել այս հարցում իրավաստեղծ ու իրավակիրառ մարմինների դերակատարությունը, դատական սահմանադրական վերահսկողության տեղն ու դերը, հասարակական հարաբերությունների

սահմանադրականացման արդի մարտահրավերները, սահմանադրական պատասխանատվության գործուն համակարգի արմատավորման հրամայականը:

Մրանք հարցեր են, որոնք, թերեւս, առանձին ու ինքնուրույն հանգամանալից քննարկման առարկա կարող են դառնալ, ուստի այսքանով կավարտեմ զեկույցի ներկայացումը:

Շնորհակալություն ուշադրության համար: